ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Ա. Ղազումյան

«31» օգոստոսի 2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռու մարզ քաղաք Վանաձոր

Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմն. դպրոցի I <գ>

ուսումնական հաստատության անվանումը · դասարան

Ջալինյան Գայանե Էդիկի

դասղեկի ազգանունը· անունը· հայրանունը

2023- 2024 ուսումնական տարի

# ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*1.* ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

---

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

*Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողակա*
*ն ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առա*
*նձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձ*
*նական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

---

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն _Աշակերտների դաստիարակել ազգային ոգով: Հայեցի դաստիարակությունը ապահովելու նպատակով մի շարք հայ գործիչների մասին տալ այնպիսի պատկերացումներ, որոնք աշակերտներին կմղեն նմանվել հայ ազգի նվիրյալներին: Բացատրել կրոնական տոների իմաստը:

Գեղագիտական դաստիարակություն _Աշակերտների մոտ ձևավորել գեղեցիկի՝ որպես ներդաշնակության մասին պատկերացումը: Ուղղորդել դեպի այն, որ գեղեցիկը ունի ոչ միայն արտաքին, այլև ներքին կողմ և ներդաշնակությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ գեղեցիկի արտահայտման ներքին և արտաքին կողմերը գտնվում են միասնության մեջ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն __Դաստիարակել քաջություն և արիություն ոչ միայն մարմնում, այլև հոգում: Ձևավորել պայքարի ոգին՝ հայրենիքի միասնականության, անվտանգության ու խաղաղության համար՝ դրա հենքում դնելով համերաշխության սկզբունքը:

Ֆիզիկական դաստիարակություն __Աշակերտներին մասնակից դարձնել սպորտային միջոցառումներին, մրցումներին: Խրախուսել մարզաձևերում աչքի ընկնող աշակերտներին: Խոսել անձնական հիգիենայի մասին:

Աշխատանքային դաստիարակություն __Հետևել դասարանի մաքրությանը, խնամել ծաղիկները: Հարգել ուրիշի աշխատանքը: Ձևավորել աշխատանքային հմտություններ: Աշակերտներին մասնակից դարձնել մանկական ցուցահանդեսներին:

Բնապահպանական դաստիարակություն __Դաստիարակել ուշադիր վերաբերմունք շրջապատող բնության , դպրոցի, սեփական քաղաքի նկատմամբ: Վաղ մանկությունից երեխան նույնպես պարտավոր է պատասխանատվություն կրել շրջակա միջավայրի պահպանման համար:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ __ Ապահովել ծնող-դպրոց կապը: Ծնողական ակտիվ կոլեկտիվին ներգրավել դպրոցական միջոցառումներին: Զրույցներ անցկացնել երեխայի օրվա ռեժիմի կազմակերպման մասին:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթները | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարողներ | |
|---|---|---|---|
| I | Սեպտեմբերի մեկ՝ գիտելիքի ու դպրության օր: Բարի գալուստ դպրոց | դասվար | սեպտեմբեր |
| II | Զրույց <<Իմ տունն ու ընտանիքը >> թեմայով | դասվար, աշակերտներ | սեպտեմբեր |
| III | Ո՞վ է հետիոտնը | դասվար, աշակերտներ | սեպտեմբեր |
| IV | ՀՀ պետական խորհրդանիշերը | դասվար, աշակերտներ | սեպտեմբեր |
| V | Տոնդ շնորհավոր, սիրելի՛ ուսուցիչ | Դասվար, աշակերտներ | հոկտեմբեր |
| VI | <<Մեր փողոցներում>> | Դասվար, աշակերտներ | հոկտեմբեր |
| VII | <<Պահպանենք բնությունը>> | Դասվար, աշակերտներ | նոյեմբեր |
| VIII | Զրույց ՝ << Իմ առօրյան>> թեմայով: | Դասվար, աշակերտներ | նոյեմբեր |
| IX | <<Մենք գնում ենք դպրոց>> | Դասվար, աշակերտներ | նոյեմբեր |
| X | Աշնան գույները, աշնանային տրամադրվածություն | Դասվար, աշակերտներ | նոյեմբեր |
| XI | Զրույց՝<<Աղետի մասին ազդանշաններ >>:Ինչպես պաշտպանվել հանրային աղետներից: | Դասվար, աշակերտներ | դեկտեմբեր |
| XII | <<Բարեկամությունը սկսվում է ժպիտից>> | Դասվար, աշակերտներ | դեկտեմբեր |
| XIII | <<Սա պետք է իմանան բոլորը>> | Դասվար, աշակերտներ | դեկտեմբեր |
| XIV | Ամանորյա հրաշքներ | Դասվար, աշակերտներ | դեկտեմբեր |
| XV | << Մեր հավատարիմ բարեկամը՝ լուսացույց>> | Դասվար, աշակերտներ | հունվար |
| XVI | << Գիրքը իմ լավագույն բարեկամն է>> | Դասվար, աշակերտներ | փետրվար |
| XVII | Քննարկում՝ << Հովհաննես Թումանյանը և ես: Իմ ամենասիրելի հեքիաթը>>: | Դասվար, | փետրվար |

| | | | |
|---|---|---|---|
| | | աշակերտներ | |
| XVIII | << Մեր լեզուն մեր ուժն է>> | Դասվար, աշակերտներ | փետրվար |
| XIX | << Մենք ծանոթանում ենք ճանապարհային նշաններին>> | Դասվար, աշակերտներ | փետրվար |
| XX | << Այսօր մայրիկների տոնն է>> | Դասվար, աշակերտներ | մարտ |
| XXI | Զրույց՝ << Իմ կատարած բարի գործը>> | Դասվար, աշակերտներ | մարտ |
| XXII | << Որտե՞ղ կարելի է խաղալ>> | Դասվար, աշակերտներ | մարտ |
| XXIII | Զրույց՝ <<Իմ իրավունքները և պարտականությունները դպրոցում>> | Դասվար, աշակերտներ | մարտ |
| XXIV | Զրույց՝ նվիրված Մեծ Եղեռնին | Դասվար, աշակերտներ | ապրիլ |
| XXV | << Մենք ուղևորներ ենք >> թեմայով  զրույց: | Դասվար, աշակերտներ | ապրիլ |
| XXVI | Հետևել դժվար դաստիարակվող երեխաների  վարքին,անցկացնել զրույց՝<<Ինչպես խուսափել վատ արարքներից>>թեմայով | Դասվար, աշակերտներ | ապրիլ |
| XXVII | << Քաղաքամերձ  ճանապարհին>> | Դասվար, աշակերտներ | ապրիլ |
| XXVIII | <<Մայիս՝ հաղթանակների ամիս>> | Դասվար, աշակերտներ | մայիս |
| XXIX | Հետևել դասագրքերի խնամքին: Ուսումնադաստիարակչական  հարցերի քննարկում և վերլուծում: | Դասվար, աշակերտներ | մայիս |
| XXX | Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները | Դասվար, աշակերտներ | մայիս |